

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան ... 14 ծր.

Վեցամսեայ ... 7 ծր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՏԻԿ

Մանուցման փողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Action du journal

"Ipravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИРАВУНКЪ

ВАРНА

Կրտսրուիւնք եւս չեկ
տրուիր

ՆԱԽԱՅԻՆ ՑՈՅՑԸ

Թուրքիոյ եղբայրները այս օրեր կատարուելիք նաւային ցոյցը, միջազգային նաւատորմի մը կողմէ, ամեն հայու հետաքրքրութիւնը շարժած է իմանալու թէ՛ մեզի համար ալ ու է պահանջ կա՞յ այդ խնդրոյն մէջ։ Դժբաղդաբար պատասխանը ժխտական է, և միմիայն Մակեդոնիոյ երեք նահանգներուն ելեւմուտքը եւրոպական հակակշի (գոնթրոլ) ենթարկելու պահանջն է որ վեց մեծ պետութիւնները այդ վճռական քայլին կը մղէ։ Այո՛, եւրոպայի համար ելեւմուտական, այսինքն դրամական, խնդիրները աւելի մեծ արժէք ունին քան ամբողջ ժողովուրդի մը գոյութեան խնդիրը։

Պետութիւնները իրենք ալ առանձնապէս լաւ համոզուած են թէ թրքական լուծը բառնալով, ինքնավար Մակեդոնիա մը եթէ ստեղծէին, շատ աւելի լաւ արդիւնք պիտի տար խաղաղութեան և յառաջադիմութեան տեսակէտով քան այն կարգադրութիւնը զոր կը ջանան ընել։ Բայց առաջինը իրենց առիթ չպիտի տար ուղղակի ոտնձգութիւններ ընելու այդ երկրին մէջ, մինչդեռ ներկայ կարգադրութեամբ եւրոպացիներ պետութիւն իրեն մասնաւոր չընշանակը ընտրած՝ կարող պիտի ըլլայ իր շահագործումները ընել ի ֆրանս թուրք պետութեան և երկրին բնակչութեանը։ Եւ միշտ այսպէս եղած է։ Թուրքին բարբարոսութիւնը և ապիկարութիւնը առիթ տուած են եւրոպայի որ սա շահագործէ Արեւելքի ժողովուրդը եւ երկրի բնական հարստութիւնները։

Մինչ պետութիւնք Մակեդոնիոյ ելեւմուտի խնդրովը կը ջրաղին, անդին, Պոլսէն և Զմիւռնիայէ սկսած մինչեւ Հայաստանի ամենախուլ անկիւններ

ընդհանուր հայ բնակչութիւնը սարսափի մատնուած է և մասնակի սպանութիւններէն ու թալաններէն զատ խմբական կոտորածներու երկիւղը կը տիրէ ամէն կողմ։ արդէն Սասնոյ Շինիկ և Ալվարիճ գիւղերու շարքերը և հրդեհումները թուրք զօրքերու ու ֆիւրտերու ձեռքով հաստատուած իրողութիւններ են։ Պոլսոյ մէջ մասնաւորապէս Հայոց դէմ ի գործ դրուած բռնութիւնները և կամայական բանտարկութիւնները, ծեծի ու տանջանքի տակ գործուած սպանութիւնները դեռ պահանջներու աչքին առջեւ ամենօրեայ դէպքեր են, որոնց համար անոնք մինչեւ այսօր զաքարիական լուծութիւն կը պահեն, իբր թէ մակեդոնական երեք նահանգներէն դուրս մնացող թրքական գաւառները խաղաղութիւն և արդարութիւն թագաւորած ըլլար։ Բայց բնականապէս այս առանց պատճառի չէ։ Լաւատեսներ կը կարծեն գիտնալ թէ Մակեդոնիոյ գոնթրոլին հաստատուէն անմիջապէս յետոյ, միեւնոյն կարգադրութիւնը հայկական նահանգներուն համար ալ պիտի պահանջուի։ Սակայն եթէ վեց պետութիւնք այս նպատակը ունենային, պէտք էր Մակեդոնիոյ հարցին հետ հայկականն ալ յուզէին և այս նաւային ցոյցը այդ երկու դժբաղդ երկիրներու համար միանգամայն եղած ըլլար։

Բայց ինչպէս կերեւայ, պետութեանց մէջ դեռ կարելի չէ եղած ու է համաձայնութիւն գոյացնել թուրքիոյ ասիական նահանգներուն համար, և մինչեւ որ այդ համաձայնութիւնը գոյանայ, թուրքիոյ հայերը զատապարտուած են սարսափի մէջ ապրելու և անզգոյշ քայլի մը պատճառաւ կոտորածի ենթարկուելու։

Հետեւաբար թրքահայոց կեանքը վրայ չտալու համար, պարտք կը ծանրանայ ամէն հայու վրայ զգուշ վերաբերում մը ունեն

նալ հոն, մինչեւ որ քաղաքական հանգամանքները և պարագաները մեզ ցոյց տան թէ պետութեանց միջեւ համաձայնութիւն մը կարելի է։

Մենք կը կարծենք գիտնալ թէ ասոր համար ալ շատ երկար ըս. պատելու պէտք չպիտի ունենանք։

ԿՈՎԿԱՍԻ ԴԵՊՔԵՐԸ

Կովկասի փոխարքան իր նոկտ. 30-ի հրամանովը վերցուցած է Տփլիսի եւ զաւառներու պատերազմական կամ պաշարման վիճակը։ Քողաքին բնակչութիւնը սկսած է ազատ շուկայով ապրել, ազատուելով զինուորներու ազդած սարսափներէն։

Շուշիէ կը գրեն թէ հոկտ. 17-ին զինուած թուրքերու քանի մը խումբեր պաշարած են հայաբնակ Սոս գիւղը, բնակչութիւնը ջնջելու համար։ Բայց զուրէն զապառ զինութեան և քաղաքի հայ զիւղացիներու ընդդիմութեան շնորհիւ յաջողուած է յարձակող վահանները ետ մղել։ Այդ կողմին մէջ թուրքերէն սպաննուած են 50 մարդ իսկ հայերէն 7։

Հոկտ. 20-ին 3 զինուած թաթարներ Շուշի քաղաքին մօտ յարձակած են երեք խեղճ հայերու վրայ որոնք շաւկով փախալ կը կրէին։ Թաթարները բարբարոսութեամբ սպաննած են երկու հայերը եւ վիրաւորած միւրը։ Սպաննուածները հայր և որդի են, այս վերջինը 11 տարեկան։ Իւրաքանչիւրին վրայ քսանէ աւելի գնդակ արձակած են։ Վիրաւորուած հայը ճանչցած է ոճրագործները, որոնք Շուշիցի թաթարներ ըլլալով ձերբակալուած են։ Հետեւալ օրը ուրիշ հայ տղայ մըն ալ սպաննուած է նոյն տեղը, եւ նոյնպէս ոճրագործները ձերբակալուած են։

Պաթուկէն Միխայէլ Թումանեան հեռագրած է փոխարքայի օգնականին սա իմաստով, «Օգնեցէք ի սէր Աստուծոյ, փրկեցէք Օգուրգէթի գաւառը կատարեալ ոչնչացումէ։ Գուրիայի

մէջ խաղախներու գործած չարիքի լուրը սարսափեցուցած է Պաթուկի ժողովուրդը։ Մեր ընտանիքները թողուած են բաղդի բերումին, ճամբաները գոցուած են զօրքերով, չենք կրնար մեր կիները եւ զաւակները ազատելու երթալ։ Լուրեր կուգան թէ զանոնք պիտի կոտորեն։ Հանգստացնելու միակ միջոցն է զօրքերը ետ կանչել եւ կայսեր մանիֆէսթը հրատարակել։ Ճնշումը ժողովուրդը կոչնչացնէ բայց չը հանգստացնեն։ Միջնորդեցէք փոխարքային, որ իր իշխանութեան ժամանակ Կովկասը արիւնով չը հեղեղուի միայն իր մէկ խօսքը բաւական է խաղախները ետ կանչելով։»

Հոկտ. 17-ի մանիֆէսթին առթիւ հայ պատգամաւորութիւն մը փոխարքային ներկայացած էր երախտագիտութիւն յայտնելու համար Կայսեր։ Փոխարքան Հայոց այդ քաղաքավարական դիմումը հաղորդելով Զարին, հետեւեալ պատասխանը ստացած է։

«Ձեզ կը յանձնեմ որ յայտնէք իմ սրտաքին շնորհակալութիւնս հայ պատգամաւորութեան» ձեր միջոցաւ ինձ յայտնած զգացմանց համար։

ՆԻՔՈՒՍԵ

Տփլիսի դատարանին ընդհանուր դատախազը հայ թերթերու միջոցաւ ծանուց թէ, հոկտ. 22-ի առիւնահեղ անցքերը բազմակողմանի կերպով պիտի քննուին, ուստի որոնք որ կարող են էական տեղեկութիւններ հաղորդել այդ գործի մասին երթան ընդհ. դատախազին սենեակը։

Պաթուկէն հետեւեալը գրած են «ՆՈՐ-ԴԱՐ»-ին։

«Թուրքերն այստեղ երկու կուսակցութեանց են ըստնուել։ Մէկն սկսել է քաղաքել, որ պէտք է վերջ տալ հայոց ջարդին եւ հաշտ ապրել նրանց հետ, միւսը շարունակում է առաջ գնալ նախկին թշնամական ուղղութեամբ։ Այս վերջին կուսակցութեան պարագլուխն է Ալուրովը, որի խումբը պատճառ եղաւ Սաղաթէլեանի տան ուժեղացման։ Թուրք բանակաց զսար շատ վրդովուած է Ալուրի դէմ, որ աշխատում է խօստանի հետ անվերջ կոտորածներ յարուցանել հայերի մէջ։ Բանն այն է,

որ հայերին վնասելով թուրքը ոչ թէ միայն չի շահուում, այլ ինքն եւս մեծապէս տուժում է»:

ՊԱԳՈՒԻ ԺՈՂՈՎՈՒՐ-ԴԱԿԱՆ ՅՈՅՑՆԵՐԸ

ԲԱԳՈՒ, 20 հոկտեմբեր

Ամսի 18-ին, ցերեկայ ժամը 10-ին, քաղաքում խուլ կերպով լուր տարածւեց, թէ թագաւոր Կայսրը իւր հպատակներին ազատութիւն է տուել: Երկու ժամից յետոյ «Պագու» լրագրի խմբագրութիւնը կարմիր թերթեր վրայ տպագրուած հրատարակեց Բարձրագոյն մանիֆէստը. որը տասնեակ հազարներով մի քանի րոպէում տարածուեց ժողովուրդի մէջ:

Սկսուեց ընդհանուր ուրախութիւն. ուսումնարաններ աշակերտներն ու աշակերտուհիները—ոուս, հայ, վրացի, հրէայ, —կարմիր թաշկինակներ փայտերի գլխին կապած: Սկսեց (ազատութիւն) կոչելով եւ «ուս»-ներով թափոր կազմեցին Ներկայիս կայա փողոցում: Խանութները փակուեցին. թափորին միացան բոլոր ազգութիւններից: Բազմահազար ամբոյսի մէջ երեւացին տասնեակներով կարմիր դրոշակներ: Գրեթէ ամենքի կուրծքը, գլխակը, ձեռնափայտը զարդարուած էին կարմիր մետաքսեայ ժապուէններով: Ամբոխն անցաւ Պարսպետ հրապարակը բոլորն ուրախ, ժպտուն դէմքով իրար համբուրում, գրկախառնում էին, շնորհաւորելով ազատութեան օրը: Կարծում էին, որ նոր յոյս, նոր արեւ է ծագել իրենց վրայ: Կանայք, աղջիկներ, երեխաներ փողերի դրոշակներով, ցնծազնի աղաղակներով վազվզում էին փողոցներով:

Երեկոյան ժամը 4-ին ամբոյսի թիւը հասաւ 4—5 հազարի: Ամբոխը մտնեց «Մետրոպոլ» հիւրանոցին: Պատշաճաբար երեւացին բարձրագոյն կրթութիւն ստացած 10—12 մարդիկ, որոնց ամբոխը դիմաւորեց «ուս»-ներով: Խնդրեցին հիւրանոցի երաժշտական խումբը, որն իսկոյն կազմ ու պատրաստ դուրս եկաւ փողոց եւ ամբոյսի պահանջմամբ նուա-

զեց «Մարտիկէզ»ը. նոյնը երգում էին երիտասարդներից շատերը: «Ուս»-ները թնդացնում էին օդը:

Թափորը շարժուեց դէպի վեր: Անցնելով «Քասպին»-ի խմբագրատան առջով, կանգ առաւ «Պագու»-ի տըպարանի առաջ, ուր մի ճառ խօսուեց: Ամբոխը կեցցներով հեռացաւ տպարանի առջից եւ կանգ առաւ ս. Նինայի ուսումնարանի դիմաց: Գիշերօթիկ աշակերտուհիներն իրենց վերակացու վարժուհու հետ դուրս եկան պատշգամբ: Վարժուհին մի ճառ խօսեց շնորհաւորելով ժողովրդական ազատութիւնը: Ժողովուրդը անպակաս դէպի ծովափ եւ կանգ առաւ նահանգապետի բնակարանի առաջ: Ընդհ. նահանգ. ֆաշիստ դուրս եկաւ պատշգամբ, գլխակը ձեռին շնորհաւորեց եւ խնդրեց իւր ուրախութիւնը եւս խառնել ցուցարարների ուրախութեան հետ: Ամբոյսի միջից մի քանի պարոններ հետեւեալները խնդրեցին նահանգապետից. 1) հէնց այս գիշեր ազատել քաղաքական պատճառներով բանտարկուածներին, 2) ազատել իւր օրով ձերբակալուած քաղ. բոլոր բանտարկեալներին, 3) վազուանից փոփոխել ոստիկանութեան կազմը եւ 4) զինուորական երաժշտական խումբը դնել թափոր կազմող հասարակութեան տրամադրութեան տակ:

Նահանգապետը 4-րդ խնդրին անմիջապէս կատարեց: Առաջին երեք կէտերին պատասխանեց, որ ինքը պատասխանի է սպասում գն. Շիրին կիւնից, դատախազին բանտ է ուղարկել բանտարկեալների ցուցակը կազմելու եւ, ինչ որ իրենից է կախուած, ուրախութեամբ կը կատարէ: Ռուս բանտերներից շատերը զանազան կողմերից խնդրեցին, ի միջի այլոց, որ նախաձեռնեց չորս անկիւնից թուրք գիւղերը տեղափոխելու համար գոնէ այժմ միջնորդէ: Այնուհետեւ ամբոխը շարժուեց դէպի Բայրի քաղաքամասը, ուր գտնուում է բանտը:

Գիշերուայ ժամը 8-ին ամբոխը գտնուում էր բանտի առաջ, ուր քայլ առ յայ խմբից մի այլ խումբ 5—6 հազար հոգեց թողկացած պաշտօնի էր բանտը 50—60 կարմիր դրոշակներով: Վերջին խումբն առաջնին դիմաւորեց ծովային զին. երա-

ժշտական խմբով: Խօսուեցին բաւական ճառեր եւս երկու կողմից: Կարգացուեց բանտարկեալների ցուցակը, որոնցից 47 հոգի արձակուեցին: Թափորն արձակուած բանտարկեալների հետ վերադարձաւ ժամը 11-ին:

Հետեւեալ օրը, հոկտ. 19-ին, քաղաքն ընդհանրապէս զարդարուած էր կարմիր դրոշակներով, կարմիր էին ձիաքաղից կախուած դրոշակները, կառապանների, ջրկիրների, ապրանքատար ձիաների պարանոցները, կարմիր էին աշակերտուհիների սլակերտների թիւերը: Առաւօտեան ժամը 9-ից փողոցները լեցուեցին 7—8 հազար հոգով, իսկ ժամը 10-ին ամբոյսի թիւը ու համար չկար: Ժողովուրդը բաժանուած էր 4—6 խմբերի: Ժամը 11-ին երեւաց թուրքերի դեաստսն խումբը մի քանի հազար հոգեց բաղկացած, մշակից սկսած ձինչեւ միլիոնաւոր, հաշիւ, քանաքալային, «չի-նովինի»-ը, բոլորը լուրջ դասկարգից մասնակցում էին. նրանք հաւաքուեցին Պարսպետ հրապարակի ներքին կողմում: Թուրք ամբոխը երկու մասի բաժանուեց. զուգահեռաբար մասն անցաւ դէպի նահանգապետի բնակարանը, իսկ միւս մասը մտաւ Պարսպետ հրապարակը: Թուրքերի մօտ կային 40—50 կարմիր դրոշակներ:

Հայերը մտնեցան թուրքերին. մօտեցան եւ Ռուսները, հրէաները, վրացիները եւ այլք: Մի թուրք երիտասարդ բարձրագու եւ թուրքերէն լեզուով հետեւեալն ասաց. «Թուրք եղբայրներ, տեսնո՞ւմ էք այդ կարմիր դրոշակը: Դա սովորական դրոշակներից չէ. այդ դրոշակի կրկնու իրաւունքը ձեռք բերելու համար շատ հայերն առանց որդիների են մնացել, շատ մայրերի արտասուքը մինչեւ այսօր էլ աչքերից չէ ցամաքել, շատ որդեր են առանց ծնողների մնացել, հարկը հազարներով մարդիկ բանտերում տանջանքներ են կրել եւ դեռ այսօր էլ կրում են: Այժմ. թուրք եղբայրներ, ուրիշներ թափած արեւան վատակներ մենք էլ տիրանում, մեր սեփականութիւնն էլ է կազմում այն թանկագին կարմիր դրոշակը: Բաւական է, որքան յիմա-

րութիւններ արինք, մինչեւ այսօր մեր շահերը չհասկանաք, մեր մարդկային, քաղաքացիական, հարեւանութեան պարտականութիւնը չկատարեցիք. գոնէ այսուհետեւ, եղբայր թուրքեր, ձեռք ձեռք տուած աշխատեք ընդհանուր եւ մեր բարեկեցութեան համար. ուստի ամուր ձեռքով բռնած պահներ մեր սուրբ դրոշակը, որն արեւնով ներկուած է... »:

Ճառախօս թուրքը վերջացրեց իւր ճառը բազմաբերան «ուս»-ների արժանաւարով: Նոյն օրը, ցերեկայ ժամը 12-ին, մի բաւական բազմամարդ խումբ, բաղկացած երիտասարդներից, երեխաներից, ցնաց դէպի բանտարկեալների բնակարանը եւ խնդրեցին քաղաքական բանտարկեալների ազատութիւնը: Սակայն առանց որ եւ է պատասխանի, զինուորները միանուազ կրակ արին ամբոյսի վրայ, որի ժամանակ, բացի սպայից՝ վրաւորուեցին 7 հոգի, իսկ սպանուեցին երկուսը: Ոտքի տակ ջարդուեցին 20—25 հոգի: Հրացանների ճայթիւններն ահազն աղմուկ առաջ բերին քաղաքում: Ժողովուրդը վերձայն ներս խուժեց բանտը եւ դուրս հանեց քաղաքական պատճառներով բոլոր ձերբակալուածներին—հայ, ուս, վրացի եւ հրէայ:

Ճաշից յետոյ Պարսպետ հրապարակ մտաւ մի ուս սպայ եւ ամբոյսը ճղելով մօտեցաւ ճառախօս ուսանողներին: «Սիրելի եղբայրներ, ասաց ուս զինուորականը, դուք չը կարծէք, թէ ես այս հագուստին ծախուած եմ. ոչ, ես մարդ եմ ձեռնման. այսօր եւ երկար տարիներ հոգեպէս կապուած եմ եղել ձեր ազատութեան ցնակացող սրտերի հետ. ես էլ եմ ձեր ընկերը»: Ծառ երկար խօսեց եւ արժանացաւ ընդհանուր ծափահարութեան:

Թուրքերի թափորն անցաւ հայոց թաղը. հայերը դիմաւորեցին ուրախութեամբ եւ իրենց գրեթէ հստուած համարեցին թուրքերի հետ: ազատական շարժման ուրախութիւնը կարծես մոռացնել էր առեւ կոտորածը: Եւ իսկապէս էլ այդպէս էր:

Երեկոյան կազմուեց 7—8 հազար հոգեց բաղկացած մի ահազն

ԲԱԳՈՒԻ ՃԱՄԻՍԱՄԱՍԿԱՆՆԵՐԸ

(Արտասպառած «Նոր-Դար» էն) (6)

Դ. [Շար. նախորդ թիւէն]

Որովհետեւ Աղայեւի եւ ուրիշների համիսլամական յօդուածների շնորհիւ է, որ «Քասպին»-ն խիստ տարածուած է ոչ թէ միայն կովկասի, այլ եւ ամբողջ Ռուսիայի մասնաւորապէս մէջ, այդ պատճառով Ռուսիայի ամեն անկիւններում մուսուլմանների մէջ կարելի է հանգիստը մոլեռանդ համիսլամականներին, որոնք խորապէս համոզուած են, թէ հէնց որ թուրքաց ուղիւնը սուրբ մեղակցին, իսկոյն ամբողջ տեղերը ծռենկ կը խոնարհի նրա առաջ եւ կընդունի նրա իշխանութիւնը:

Ե.

Կովկասի համիսլամականները չեն

բաւականում իրենց զբաժնով. նրանք զեռ հարկաւոր դէպքում հրապարակով արտայայտում եւ ցոյց են տալիս իրենց համիսլամական գիտաւորութիւնները: Մարդան-բէկ թոփչի-բաշեւն այս տարի ամբան սկըզբին, երբ բեկերի հետ թիֆլիս էր եկել, վրաց լրագրողները հասարակութեան մէջ ասում էր, թէ մուսուլման ինտելիգենցիան պէտք է կանգնած լինի կրօնական հողի վրայ եւ ամեն տեղ եռանդազնի պիպի պաշտպանէ մահմեդական կղերականութեան «նոս բօսիմբուս»-ը:

Իսկ երբ նրան առաքելեցին թէ այն ժամանակ որ եւ է երկրի բնակիչներին մէջ, որոնք զանազան կրօններ են դաւանում, փոխադարձ յարգանք չի կարող լինել քաղաքացիական զարգացման գործում որովհետեւ կրօնները ուղիւնով բացասաբար են վերաբերում իրար,—այդ առարկութեանը նա ամենայն ստանալտութեամբ պատասխանեց. «հապա ի՞նչ անենք, երբ մենք ուրիշ դրօշակ չունենք»:

Որ համիսլամականները քրիստոնեաների հետ գործ ունենալիս ուրիշ դրօշակ չունեն, բացի հարեւան ազգերի միջեւ եղբայրական կոնկրետ յարուցանող առեւտրութիւնից, մենք այդ արդէն գիտենք 1896 թուին հայաստանում եւ ներկայ շարադէս 1905 թուին Անդրկովկասում կատարուած արեւնահեղ եղեւններից:

Բայց ողջամիտ եւ քաղաքակիրթ մուսուլմաններն մէջ ուրիշ տեսակ զրօշակի էլ ենք հանդիպում: Ահա շատ օրինակներէ մէկը:

60. ական թուականներին թիւերի անփորձներ մտցրեց Բոսնիա գիւղական բնակչութեան վիճակը բարելաւելու համար: Այնտեղ գիւղացիները բոլորն էլ քրիստոնեայ են. իսկ կալուածատէրերը բոլորն էլ մահմեդական: Կալուածատէրերն ապրտամբեցին սուլթանի կառավարութեան դէմ եւ նրանց հետ միացան քաղաքային մուսուլմանները: Իսկ ապստամբութեան գլուխ էին անցել մոլլաները: Ապստամբութիւնը ճրնչում էր Էմէր-փաշան, Դրիմի պատեւ. բազմին մասնակցող զորքերի նախկին

զինուոր հրամանատարը: Էմէր փաշա մի օրում կախեց 50 մոլլա, որոնք կուում էին քրիստոնեայ զինվորացիների տնտեսական վիճակի բարելորման դէմ:

Այն դրօշակը, որի տակ գործում էր Էմէր-փաշան, աշխարհական մի օրէնք էր, որը հաւատարմագրութեամբ հոգում էր պետութեան բոլոր բնակիչներին վիճակի մասին, առանց կրօնի եւ ազգութեան խտրութեան:

Էմէր-փաշայի դրօշակի տակ շատ լաւ կարող են իրար կողք կողքի ապրել խաղաղ եւ առաջդիմել, Քրիստոսի եւ Մուհամմէդի երկրպագուները:

Իսկ թոփչիբաշեւի կղերական դրօշակի տակ կովկասի պէս երկրում, ուր ապրում են զանազան դաւանութեանց պատկանող ազգեր, կարող է լինել միայն ստրկութիւն, խռովութիւն եւ աւերածութիւն:

Բարեբաղտաբար համիսլամականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հոգեկան հիւանդութիւն (եւ շատ վտանգաւոր հիւանդութիւն), որն առ ժամանակ բռնել է թիւրքերն եւ այն-

խումբը զուտ հայերից եւ մի քանի ճառարտու առանձնից : Նրանք զիմեցին թրքական թաղը, անցան թուրքաց բազարը, ապա գիծեցին պարսկական հիւպատոսի բնակարանը, ուր իջեւանել էր չահի եղբայրը : Որ եկել էր հոկտ. 18-ին : Հայերից ճառար խոսեցին եւ ուսանելից : Ճառարտուների նպատակն էր հայ ժողովուրդի կողմից չնորակաւորութիւններ յայտնել չահի եղբորը, եւ խնդրեցին, որ նորին բարձրութիւնը չահին հետագրով յայտնի հայերի երախտագիտութիւնը գէպի պարսկական գահը եւ արդարադատ կառավարութիւնը : Նորին բարձրութիւնն իսկոյն եւ եթ հաղորդեց հետագրով հայերի բարեմաղթութիւններն ու երախտագիտութիւնը :

Գիշերն անցաւ խաղաղ :

ՓԱՐՈՍ

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի ապահովագրական ընկերութիւններ :

ԱՀԱԳԻՆ ԳՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Վեյերմա Բոլքա ի նոյնմ. 3 ի թիւին մէջ այս վերտառութեամբ հետեւեալ յօդուածը կը կարդանք .

«Հոկտեմբեր ամսոյն Նիւ-Եորքի մէջ երեւան եկաւ գալիսկալից գործ մը, որ մեծ իրաւանցում պատճառեց ինչպէս Ամերիկայի նոյնպէս եւ Եւրոպայի մէջ : Թօմա Լօսըն, ծանօթ ամերիկեան ապահովագրիչ ընկերութեանց ներքին գործերուն, սեպտեմբեր ամսոյ մէջ տետրակ մը հըրատարակեց «Մոլեքան գրամատարութիւն» մակագրութեամբ, որով հըրապարակ հանեց գողութիւնները : Երեսը գործուած էին «Նիւ-Եորք» եւ «Միուշուալ» ապահովագրող ընկերութեանց տնօրէններէն ի մետա ապահովագրելուց : Գողութիւնները կը հասնէին մինչեւ 30 միլիոն անգղիական լիւրայի : Թօմա Լօսըն կոչ ըրաւ

ապահովագրելուց, մասնաւորապէս «Նիւ-Եորք» ընկերութեան միջոցաւ ապահովագրեալներուն (զի այդ ընկերութեանէն ամենէն աւելի գրամ գողցուած էր) որպէսզի փոխանորդ մը կարգեն որն որ ապահովագրելու տրամադրութեան համեմատ, ընկերութեան հաշիւներն աչքէ անցունէ : Քանի մը օրուան մէջ 16000 ապահովագրեր ժողովեց եւ սկսաւ իր գործողութիւններն «Նիւ-Եորք» ընկերութեան զէմ : Նշանակուեցաւ քննիչ յանձնարարութեամբ մը ձգարտելու համար ընկերութեան տնօրէնները : Դեռ իր առաջին նիստերուն մէջ յանձնաժողովը ստուգեց վերոյիշեալ գողութիւնը եւ գտաւ նաեւ ուրիշ անկարգութիւններ ու գողութիւններ : Որոնք վերջին աստիճան վարկաբեկ կընեն «Նիւ-Եորք» ու «Միուշուալ» ընկերութիւնները :

Այս կացութիւնը անգլիական լըրադրաց թղթակցներէն հետագրուելով մեծ սարսափ յառաջ բերաւ, այն Եւրոպացուց մէջ, որ ապահովագրեալ էին «Նիւ-Եորք» ու «Միուշուալ» ի :

Աւստրիական ապահովագրեալները վիշնայի մէջ ընտրեցին փոխանորդ մը որ պիտի ժողովէ ապահովագրերը, ու պիտի խորհի թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել պահպանելու համար ապահովագրելուց իրաւունքները :

Քանի մը օրանոցի ապահովագրեալներ Նիւ-Եորք զրկեցին երկու փաստաբաններ, որպէսզի արագ միջոցներ ձեռք առնեն յանուն բոլոր ֆրանսացի ապահովագրեալներու պաշտպանելու այն իրաւունքները որ յիշուած են ապահովագրելու մէջ : Նեվատա նահանգը, Ամերիկայի մէջ, արգիլեց «Նիւ-Եորք» ընկերութեան գործառնութիւնները, մինչեւ որ քնննութիւնը լինայ, եւ այդ ընկերութեան զերբը լաւ մը որոշուի :

Այս անգլիկութիւնները, զորս օտար մամուլէն կը քաղենք, իրարանցում յառաջ պիտի բերեն նաեւ մեր երկրին մէջ գտնուող ապահովագրիչ «Նիւ-Եորք» ընկերութեան ձօն : Անոնք անշուշտ պիտի դիմեն վաճառականութեան նախարարին, որպէսզի հարկ եղանակ ընէ պահպանելու համար պուլիարական գրամագրութիւնները, զոր միամիտ մարդիկ

անհետաճեցութեամբ եւ թեթեւահաւատութեամբ վստահացած են այդ ընկերութեան : Եւ այս գրամագրութեան գումարը կը հասնի ամենաքիչը 15-20 միլիոն լէվի : «Նիւ-Եորք» ընկերութիւնը Պուլկարիէն կը ժողովէ տարին մէկէն մինչեւ մէկուկէս միլիոն լէվ : Այս ամէնը այսօր կարելի է կորսուելու վտանգին ենթարկուած է :

Որովհետեւ քննիչ յանձնաժողովին երեւան հանածները խիստ չահազըրգաւան են, մենք պիտի հրատարակենք յառաջիկայ թուով մը յիշեալ երկու ընկերութեանց տնօրէններուն վկայութիւնները :

Վեյերմա Բոլքա թիւ 1517

Վերի յօդուածին պատասխանատուութիւնը պուլկար թերթին թողուլով կը յայտարարենք թէ մենք մեր կողմէ ոչինչ ունինք բաւելիք յիշեալ ամերիկեան ընկերութեանց մասին :

Միայն նկատելով թէ ապահովագրութիւնը նախազգուշութեան նպատակաւ յարմար միջոց ընդունուած է ընդհանրապէս, մենք խորհուրդ կուտանք մեր ազգակիցներուն որ ամեն իրենց ներկայացող ապահովագրիչ գործակալներու խօսքերուն դիւրաւ չը համոզուին, այլ խոհականութեամբ վերաբերուին :

Այս օրեր Պուլկարիայ հայաբնակ քաղաքները շրջագայելու ելած է իւնիոն Նոր Բուտի ապահովագրական մեծ ընկերութեան Էնսթէքթեօնը որ պատուաւոր հայ մըն է եւ որ կարող է ապահովագրելու ուղող մեր ազգակիցներուն հարկ եղած բացատրութիւնները տալ իր ներկայացուցած ընկերութեան մասին : Ուստի յարմար առիթն է որ փափաքող օգտուի անկէ :

Ինիոն ընկերութեան վստահելիութիւնը մանաւանդ սա իրողութեամբ կը հաստատուի թէ եւրոպական մեծ պետութեանց

պաշտօնական ներկայացուցիչներէն կազմուած թուրքիոյ Հանրային Պարտուց վարչութիւնը իր պաշտօնէից մեծագոյն մասը իւնիոնի ապահովագրել տուած է :

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Էլմիածնայ Գէորգեան ձեւարանը գիշերթիկ ուսանող ընդունուելու համար այս տարի 200 խնդրակոներ եղած են, բայց չէնքին անբաւականութեան պատճառաւ միայն 15 ընդունուած են :

—Խորին ցաւօք կ'իմանանք թէ Տէր Ներսէս եպիսկ. Ասլանեան վախճանած է Տրապիզոնի մէջ, ուր առաջնորդական պաշտօն կը վարէր, իր Պուլկարիա գալը անկարելիութեան մատնուելով : Հանգուցեալը ուղղամիտ եւ օրակեաց եկեղեցական մըն էր եւ կարհամարէր ամէն կարգի շոշոքորգութիւն ու քծնում, եւ ճիշդ այս պատճառաւ նիւթական անձուկ վիճակի մը մէջ ապրած է, բայց միշտ օգտակար եղած է ազգին իր վարած կարեւոր պաշտօններուն մէջ :

—Գահիրէի Գալստեան վարժարանի նոր շէնքին հիմնարկութիւնը ի մօտոյ պիտի սկսի այդ նպատակաւ գնուած 3600 մէթր գետնին վրայ, որ կը գտնուի Իսմայիլիէ եւ Պուլադ թաղերուն մէջ տեղը : Նույնպէս Առեւտրական վարժարանն ալ Գալստեանի մօտ պիտի կառուցուի վսեմ Պօղոս փաշա Նուպարեանի բարերարութեամբ :

—Պատրիարքարանը Ռումանիոյ Հայոց այցելու հովիւ կարգած է Տէր Գէորգ եպիսկ. Երէցեանը, որ ինչպէս կը յիշեն մեր ընթերցողները, մերժած էր կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ընդունելու, աչք ունենալով Երուսաղէմի պատրիարքութեան : Իր այս ակնկալութիւնն ալ առայժմ չուրը ինկած է, քանի որ այդ վանքին շուրջը վերջին տարիներու մէջ անցած դարձածները եկան բաւական որոշ չափով ստուերացնել Երէցեանի համբաւը : Եւ այդ իսկ պատճառաւ ստիպուեցաւ Պոլսոյ փոխանորդութեան պաշտօնէն ալ հեռանալ : Այժմ կստատուի որ Ռումանիոյ հովիւութեան պաշտօնը ստանձնելով ջանայ իր կորուստած համակրութիւնը ձեռք բերել :

ԴԵՐԱՍԻՆ Պ. ԳԱԼՅԱՆՍԻՆ

Հինգշաբթի գիշեր տեղի ունեցաւ «Օթէլլօ» ի ծանուցեալ ներկայացումը : Սրահը հոծ եւ ընտրեալ հայ բազմութեամբ մը

տեղից տարածվել է մահմեդական ուրիշ երկրներ : Շուտով մասնաւորաները կազատուեն այդ հիւսնադութիւնից եւ կը մտնեն ընդհանուր առաջադիմութեան շահիդը, իրենց համար պատիւ համարելով պատկանելու քաղաքակրթ լայնարկին, քան թշնամութիւն տածելու գէպի այդ աշխարհը, մի թշնամութիւն որ կործանարար է հէնց իրենց համար, եւ որը թելագործւում են նոանց ներկայումս բթամիտ եւ չարահոգի համախառնականները :

1896 թուի հայկական կոտորածից յետոյ Թոփչիբաշեւը գնաց Կ. Պոլիս, չնորհաւորեց սուլթանին թաղիեւի կողմից, որ «Նորին մեծութեան հըրամանով, աջողութեամբ կը ճատուած է թիւրքիայի քրիստոնեայ հպատակների թիւը, որով համախառնականութիւնը մօտենում է վերջնական յաղթանակին» :

Ու շքանշան ստացաւ : Թոփչիբաշեւի անուան տրուած ֆիրմայի մէջ ասուած է . «Դու ուրախ ծուծ ես քո «Կապի» ով աւելի ճարտարօրէն, քան քո նախնիքները թիւնդանօթներով» : «Թոփչիբաշի» նշա-

նակում է թնդանօթները պետ, որմբաճիգների հրամանատար :

Փետրուարի կոտորածից յետոյ Բագլում հաշտութեան միտինգ գումարուեց : Որուն ներկայ էր երկու հազար հոգուց աւելի :

Թոփչիբաշեւն «Եւ Աղայիւր ճառի արտասանեցին, որոնց մէջ ամենախիստ բառերով գայրոյթ էին յայտնում ուսական կարգերի դէմ եւ հիշում էին Թիւրքիայի պետական «օրինական» կարգերից :

Հաջի Զէյնալ-Աթին Թաղիւր պարծնում էր, որ այդ պարոններն իրենց այդպիսի վարմունքի համար պէտք է խիստ պատժի ենթարկուին, բայց ազատուեցին իւր ջանքերի եւ միջնորդութիւնների շնորհիւ :

Երբ Բագլում կայացաւ խաղաղաբար մասնաժողովի առաջին նիստը, անդամներից մէկը կարծեմ պ. Սաղաթէլեանը սկսեց, Ահմէդ-բէկ Աղայեւին յանդիմանել, որ «Քապի»-ի մէջ հայերի դէմ նրա ապագրած վառող յօդուածներն էին յարուցել փետրուարի կոտորածը : Աղայեւը 30 ից աւելի հայ եւ թուրք պատուաւոր

անձերի ներկայութեամբ պատասխանեց . «Դուք հայերդ, ջանում էիք կործանել իմ հայրենի թուրքաց պետութիւնը, որը մեծ ապագայ ունի իբրեւ մի պետութիւն, որ պիտի բաղկանայ 150 միլիոն բնակչից եւ պիտի տարածուի ովկիանոսից ովկիանոս : Եւ, ի հարկէ, ես պէտք է դրէի ձեր դէմ» :

Հաջի Զէյնալ-Աթինը խոշոր նըպասներ է տալիս Պարսկաստանում Եզրիպտոսում եւ Հնդկաստանում զանազան լիզոններով հրատարակող շատ լրագիրների, քարոզելու համար այն գաղափարը, որ իսլամի փրկութիւնն իբր թէ կախում է շիաներին թուրքաց սուլթան խալիֆի կրօնական քաղաքական գործխանութեանը հպատակեցնելուց :

Հաջի Զէյնալ-Աթինը խօսակցութեան ժամանակ շարունակ պնդում է, որ պարսից չահը յանուն իսլամի բաւճազոյն նպատակների պէտք է դառնայ թուրքաց սուլթանի մի հասարակ պաշտօնեայ եւ ուժիկ ստանայ նրանից :

(Շարունակելի)

լեցուած էր . Պ. Գալֆանան ճարտար գերասանի մը ընդունակութիւնները ցոյց տուաւ . բայց անկեղծ ըլլալու համար պէտք է ըսել թէ իր չարժ ու ձեւերուն մէջ չափազանցութիւններ կը նըշմարուէին, բայց ատոնք հետզհետէ պիտի սրբագրուին անշուշտ հաւատարմութե Պ. Գալֆանան իր ընտրած ասպարէզին նըբութիւնները ուսումնասիրելու և իր անձին վրայ պատկերացնելու համար ամեն զոհողութեան յանձնառու է արդէն . հետեւաբար մեր թատերասէր հասարակութեան վրայ պարտք կը ծանրանայ զինք քաջալերել, որով օգնած կըլլանք հայ գեղարուեստին և թատերաբեմին բարձրացման . Պ. Գալֆանան այս նպատակին ախոյեանն է, պէտք չէ զինք լքանել որ անոր զոհն ըլլայ :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Մաքէթոնիա գօնթրօլը իշխն ալթը պէօյիւկ տէվլէթլէրին Պապը Ալիյէ վէրմիշ օլտըղլարը իւլթիմաթօմըն ճէվապընը վէրմէք իշխն պիր դաշ կիւնտէն պէրու Պապը Ալիտէ վէ Նըլտըղտա իճրա օլընանմիւղէքէրէլէրին նէթիճէսի օլարագ՝ ճէվապըրէտտ վէրիւմիշ տիր :

Իշպու ճէվապտա Պապը Ալի գօնթրօլը գապուլ իթմէտիկտէն մատաա էվրոքալը սիվիլ աճէնթլէրին մէմուրիյէթի տախի իքի սէնէտէն լաղվ ու իքմալ օլընաճաղընը տէվլէթլէրէ իսթար իտէյօր :

Թիւրք հիւքիւմէթիւնին ալթը մուաղղամ տէվլէթէ գարշը պուքիւստահլըղը նէտէն իլէրի կէլմէքտէ օլտըղը էլան անլաշըլմայօր . անա քի՛մլէր ճէսարէթ վէրիյօր վէ նէ՛յէ կիւվէնիյօր . Պու սիւալլարա ճիտտի պիր ճէվապվէրիլմէզ իսէտէ, էթրաֆտա տէօնէն հալլէրտէն վէ տահա էվլէլ վաղը օլան թէճրիւպէլէրտէն չէօյլէ ֆարգ օլընիյօր քի՛ իւլթիմաթօմը իմզալմըշ օլան տէվլէթլէրտէն պիր իքիսի բէրտէ արգասընտան Սուլթանա ճէսարէթ վէրմէքտէ օլաճաղար, եախօտ Ձանագգալէյէ գարշը թօր իսթիմալը իշխն տէվլէթլէր պէյնիտէ էլան իթթիֆագ օլմատըղընա Սուլթան աշնա վէ ալիւահ պուլընմալը տըր :

Պու կիւնքի Մաքէթոնիա գօնթրօլը մէսէլէսի 1895 տէ էրմէնիստանըն ալթը վիւայէթլէրի իշխն ինկիլիզ, ֆրանսըզ վէ Բուս տէվլէթլէրին միւթթէֆիգէն Սուլթանա իւլթիմաթօմ վէրմէլէրինէ թէչպի՛ն օլընիյօր . օլ

էսնատէ Սուլթան իսլահաթ ճէտվէլի գապուլ վէ իլան իթմիշ օլմագլէ պէրապէր, ուֆագ պիր տէսիւնէ իլէ Տրապիզոն գըրկընը պաշլատը, վէ պիր գաշ կիւն էվլէլ միւթթէֆիգէն իսլահաթ իտտաա իտէն տէվլէթլէր սիւքիւտ սէյիքի հալիւնի քէսպ իթտիլէր : Պու տէֆա տախի աշնը գօմէտիա վուգու պուլաճագ զանն օլընիյօր, զիրա 1895 տէքի Բուսիանըն օլընը պուտէֆա տէ օյնայանլար պուլընաճագ կէօրիւնիյօր .

Թիւրք մէհաֆիլի ասքէրիյէսիւտէ կէզէն զաննիյաթ շուստան իպարէթ տիր : Էվրոքալըլար պու կիւն Մաքէթոնիատա գօնթրօլ թէէսիս իթտիքտէն սօնրա, աղ միւտտէթ զարֆընտա թիւրք օրտուսընը Մաքէթոնիատան չըգմասընը թալէպ իտէճէքլէրվէ գուվէլի ինզըպաթիյէի եալընըզ ժանտարմայա թէրքլէ էվրոքալը զապիթլէրլէ իտարէ իտէճէքլէր : Պիր միւտտէթ սօնրա տախի Շարգ-Բուսէլի կիպի օքօնօմի իտարէսիւնին թէէսիսիւնէ գաղըշաճագլար վէ նիհայէթ կիւնիւն պիրիտէ Մաքէթոնիայը թիւրքիատան ալըրաճագլար :

Թիւրքլէր իշթէ պու գօրդու իլէ՛ Մաքէթոնիանըն իտարէսիւնի թէտրիճլէ էլտէն չըգալուպ զայպ իթմէքտէն իտէ, չիմտի պիւթիւն գուվլէթլէ աշնըն մուհաֆաղաը իշխն հէր պիր թէհիլքէի կէօղլէրինէ ալմըշ կէօրիւնիյօրլար, վէ տէվլէթլէրի գօրգուլթմագ իշխն իսրիսթիանլարը էճնէպիլէրլէ պէրապէր գըրմայա գաղըշաճագլարընը զէմնէն անլատիյօրլար :

—Սուլթան քէնտի քիւչիւկ չօճուղընը վէլիահտ վէ քէնտի վէֆաթընտան սօնրա իսալիֆէ թանըթմագ մագսէտի իլէ, տիւնեաշնը պիր չօք թարաֆլարընտան իւլէմալար Սթանպուլ տալէթ իթմիշ տիր : Սուլթան պախշիլէր վէ վատար իլէ պու իւլէմալարը գանտըրմայա վէ անլէրին ֆէթվաաընը ալմայա չալըշըյօր . Մուրատա եալտըղը կիպի՛ քէնտի պէօյիւկ էվլատաընը վէ ամուճա զատէլէրինէ էնվալի պէհանէ վէ տէսիսէլէրլէ աճագլըզ, իգթիտարսըղըզ վէ տինսիլիք իֆթիւրալար իլէ լէքէտար իթմէքտէ վէ մահպուս հալիւնէ թուլթմագտա տըր . զիրա անլէրին էքսէրիսի միւթէասուպ էֆքեարլուրտան իսալի վէ մէտէնիյէթէ մէյիլի օլմաղլէ Սուլթանըն էֆքեարլարընա մուգալիւր տիրլէր :

—Կիրիտ ասըլարընտան պիր գաշ չէթա կիտուպ ինկիլիզ վէ րուս ասքէրլէրինէ սիւահլարընը թէսլիմ իթմիշլէր, 338 թիւ

ֆէնկ վէ՛ 19 թօրպա ֆիշէնկ թէսլիմ ալընմըշ :

Ր Ո Ւ Ս Ի Ա

Ջէմաթվօլար թէքրար Մօսկուտա գօնկրէ թէճէմմիւ իտէրէք, հօկտ, 17 տէ Ձարըն նէշը իթտիկի մանիֆէսթին վատաըրընը պէյէնմէքլէ պէրապէր, հիւքիւմէթին անլէրի իճրա իտէճէկիւնէ էմնիյէթլէրի օլմատըղընը պէյան իթտիլէր . զիրա պիր թարաֆտան մանիֆէսթի նէշը իթմէք վէ տիկէր թարաֆտան իտարէի ասքէրիյէ իւլանլէ էհալիի ասքէրէ գըրտըրմագ էմնիյէթի ումումի սէլպ իթմիշ տիր : Ջէմաթվօլարտան պիրի նութգընտա տէտիքի՛նիմտիքի ալթօկրատ հիւքիւմէթի գուվլէթտէ իքէն հէր տագիգա իշխն մանիֆէսթի լաղվ իտէպիլիւր . շու հալտէ հիւքիւմէթի հաղըրէյէ էմնիյէթիմիզ օլմագա՛

—Բօլօնիայա օթօնօմի վէրիւմէյէճէկիւնի Մ. Վիթթէ բօլօնէզ մուրախալարա պէյան իթմիշ տիր : Պուլար տախիլի օթօնօմի իտարէսի թէչքիլի, բօլօնէզ իսանընըն մէքթէպլէրտէ տէրո վէրիլմէսի, տախիլի իշլէր իշխն մէպուսան մէճիսի թէճէմմիւսի իտտաա իթմէքլէ պէրապէր, Բօլօնէզլէրին Բուսիատան ալըրմայա ասլա էֆքեարլարը օլմատըղընը պէյան իթմէքտէ տիրլէր :

Վարշաղիտա 40 բրօֆէսէօրլէր մէճիս իտէրէք, իտարէի ասքէրիյէնին գալտըրըլմասընը իտտաա իթտիլէր վէ պու պապտէ Ջէմաթվօլարըն գօնկրէսիւնէ բրօթէսթ էյլէտիլէր :

Լօցտա ֆապրիգալար իշլէմէկէ պաշլամըշ վէ մէքթէպլէր պանգալար վէ մաղաղալար ալըլմըշ տըրլար :

—Օտեստա պուլընան էվրոքա թապաալարը՝ զուհուրա կէլէպիլէճէք իսթիւլալտան մուհաֆագա օլընմալարը իշխն հիւքիւմէթտէն թէմիւնաթ իսթէմէքտէ տիրլէր . Արսի հալտէ քէնտի հիւքիւմէթլէրէնտէն մուհաֆագա իսիլմէլէրինի բէճա իտէճէքլէր :

—Բէթիւրսպուրկտա կաղէթալար նէշը օլընմայա պաշլատըլար . Բոռս վէ Սյօլօ նամ կաղէթալար իշլէլէրին թաթիլիւնէ գարշը եաղարագ, եալընըզ իշճի բարթիսիւն սէօղիւ օլմաղ, էհալիւնին էքսէրիսիւնէ պագըլմալը տէյօրլար :

ՊԻՐ ԱԶ ՏԸԳԳԱԹ

Սէնէի հալիյէնին օնպիրինճի ալընտա պուլընտըղըմըզ հալտէ ապօնէլէրիմիլիւն պիր գըսմը էլան կաղէթա պէտէլիւնի կէօն

տէրմէմիշ տիրլէր . հալպուքի պիր կաղէթանըն նէշը իշխն հէր պիր մէսարիֆ բէչին բարա իլէ օլմաղլէ, իրառնալի կիպի եալընըզ ապօնէ պէտէլի իլէ իտարէ օլընան պիր կաղէթա ալաճաղընը սէնէլէրճէ պէքլէտէմէզ, զիրա բուր, քեաղըտ, մաթպաա վէ միւրէթիպլէր հէր պիր նօմէրօտտ բարա իսթէրլէր, Պու հագիգաթը նաղարա ալաղագ՝ էլտն պօրճլարընը էօտէմէմիշ օլան ապօնէլէրիմիզ պու ալըն 25 ինէ գաաար 1905 սէնէնին կաղէթա պէտէլիւնի կէօնտէրմէլի տիրլէր . Աքսի թաքըրտէ թէէսիւֆէն իսթար իտէրիլքի՛ էօտէմէյէնլէրին իսթիլէրին նէշըլէ կաղէթալարընը քէսմէկէ մէճպուր օլաճաղըզ :

ԹԻԻՋԱՐԻԷ ԻՓԼԻԲ ԾԻՐԲԷԹԻ

—(օ)—

Ֆ Ի Յ Ա Թ Լ Է Ր

Գ ը վ ր ա գ ի փ ի ի ֆ	
Պօրիս	Նօմ. 8/14—10. 95 Ֆր.
Ինկիլիզ Ա.	» 8/14—11. 40 »
» » Ա.	» 18/24—13. 10 »
Ինկիլիզ Բ.	» 8/14—11. 20 »
» » Բ.	» 18/24—12. 90 »
Ինկիլիզ Գ.	» 6/12—10. »
Իտալիա »	8/12—10. 20 »
Նէտի Բուլլէ վէ	
Մէթլէրն »	3/4— 9.60 »
» »	» 10—10. 20. »

Ս Ո Ղ Ա Ն Ի Ֆ Ի Ի ֆ

«Իտալիա» Հուլիոսարիս վէ	
Նէտի Բուլլէ Նօմ. 3/10—9. Ֆր.	
Մէթլէրն »	3/10—9. 50 »
Ինկիլիզ Ա.	» 6/14—9. 50 »

Գ ա պ օ ք պ կ գ

Նէրլի (Տէլնէ) կէնիշ 83սնթ. — 14. Ֆր.	
» » » 90 սնթ. — 16. »	
Բէչիւնէն թէսլիմ վառնտտ	

Զ Է Մ Ե Ն

—օ—

Գալիսէրի պաօտըրմասը թէրթիպի իլէ պաօտըրմա եառանլարըն հէր հալտէ չէմնէն իգթիգալարը օլաճաղընտան, իտալիա վէ թագէ չէմնէն ալմաղ իսթէյէնլէր վառնտտա Տ. Յ. Ճանկիւլեանա վէ Բուսճուգտա Տ. Ղուկաս Օղանեանըն պագալ տիւքեանընա միւրաճապթ իթմէլի տիրլէր :

ԹԵՅ ԹԵՅ ԹԵՅ

—օ—

Ընտիր եւ հօտաւէա գուտ չինահան թիւ գործածել ուղող փափկաճալակ յաճախորդներ թող գիմնէ Տ. Հրանտ Երկանեանի խանութը, Բրեսլավսքա փողոց թիւ 24, Հայկական Ընթերցարանին կից, հաս պիտի գաննն նաեւ ընտիր գուլպաներ ֆանէլաներ եւ այլն :

Одговорникъ А. Курбетиянъ
печатница Д. Тодоровъ и С-же—Варна